

ք. Երևան

<<17>>

05

2022թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 16.02.2022թ. կնքված ՆԱԲԿ-ՄԱԾՁԲ-22/32 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են և կնքված պայմանագրի 4.2 կետը շարադրել հետևյալ կերպ.

-4.2 Գնորդն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայն սույն համաձայնագրի պայմանների /համաձայնագրի 1.2 կետ/, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

1.2 Սահմանված կարգով ընդունված Ծառայության դիմաց վճարումը կատարվում է 30 բանկային օրվա ընթացքում:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն»
ՓԲԸ


ք. Երևան, Արմենակյան 108/4

ՀՎՀՀ 01508793

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150001612200100

Մ. Ադամյան



ՎԱՃԱՏԱՌՈՂ
<<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ
ք. Երևան, Հ. Քոչարի 5/2

ՀՎՀՀ 00078217

h/h 900018002080

<<ՎՏԲ Հայաստան Բանկ>> ՓԲԸ

amatun@yahoo.com

010-268796

Գ. Արշակյան

